

ՏԵՐՈՒՆԻ**ՀԱՆԳԻՍՏ**
**Տ. ԱՐԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵԻՐՎԱՆԵԱՆԻ
(1934-2024)**

Ս. Յակոբեանց Միաբանութիւնը վիշտն ունեցաւ կորսնցնելու իր երեցագոյն Միաբաններէն՝ Տ. Արիս Արք. Շիրվանեանը, որ տեղի ունեցաւ Զորքշաբթի, 3 Յունուար, 2024-ին, ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 89 տարեկան հասակին:

Հանգուցեալը՝ աւագանի անունով Արմենակ, ծնած է 23 Յուլիս, 1934-ին Հայֆայի մէջ: Զաւակն է Յովհաննէս եւ Լուսաբեր Շիրվանեաններու: Նախնական կրթութիւնը ստացած է Հայֆայի Սուրբ Եղիա նախակրթարանին մէջ, ապա՝ Պուրճ Համուտի Սուրբ Քառասուն Մանկանց վարժարանին մէջ (Լիբանան):

1952-1957 տարիներուն եղած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Ժառանգաւորաց վարժարանի սան:

1954-ին ձեռնադրուած է Սարկաւագ, ձեռամբ՝ օրուան Պատրիարքական Տեղապահ Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Տէրտէրեանի:

1957-ին ձեռնադրուած է կուսակրօն քահանայ, ձեռամբ՝ Տ. Տիրան Արքեպիսկոպոս Ներսոյեանի՝ վերակոչուելով Տ. Արիս Աբեղայ: Նոյն տարին նշանակուած է որպէս փոխտեսուչ եւ դասախօս Ժառանգաւորաց վարժարանի, միեւնոյն ատեն՝ գաւազանակիր Տ. Տիրան Արքեպիսկոպոս Ներսոյեանի:

1958-ին եղած է Ամմանի (Յորդանան) Սուրբ Թադէոս եկեղեցւոյ հոգեւոր հովիւ եւ Հեթումեան հայկական դպրոցի տեսուչ:

1964-ին աւարտած է Դարեմի (Անգլիա) համալսարանի Աստուածաբանութեան ֆակուլտետը՝ ստանալով բակաւարի աստիճան: Նոյն տարին Երջանկայիշատակ Վագգէն Առաջին Վեհափառի հրաւերով առաջին անգամ կ'այցելէ Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ, ձեռամբ՝ Տ. Ասողիկ Եպիսկոպոս Ղազարեանի կը ստանայ վարդապետական գաւազանի մասնաւոր իշխանութեան չորս աստիճաններ:

1964-1966 տարիներուն ուսանած է Փարիզի Կաթոլիկ համալսարանի մէջ:

1966-ին Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի օրուան առաջնորդ՝ Տ. Թորգոմ Եպիսկոպոս Մանուկեանի հրաւերով մեկնած է Լոս Անճելըս եւ նշանակուած է Սուրբ Յակոբ հայկական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ:

1972-ին ձեռամբ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի առաջնորդ՝ Վաչէ Արքեպիսկոպոս Յովսէփեանի ստացած է Ծայրագոյն Վարդապետութեան 10 աստիճաններ:

1972-1974 տարիներուն Վազգէն Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրաւերով դասաւանդած եւ պաշտօնավարած է Գէորգեան Հոգեւոր Ճեմարանէն ներս նախ՝ որպէս փոխտեսուչ, ապա՝ տեսուչ:

1974-ի Սեպտեմբերին, ձեռնադրուած է Եպիսկոպոս, ձեռամբ՝ Երջանկայիշատակ Վազգէն Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

1975-1979 տարիներուն եղած է Գանատայի Հայոց թեմի առաջնորդական փոխա-նորդ: Այդ ընթացքին զգալի աշխատանք տարած է Գանատայի Հայոց թեմի ստեղծման ուղղութեամբ, նոր ծուխեր հիմնած է Համիլտոնի եւ Օտտաւայի մէջ, իսկ Թորոնթոյի մէջ հիմնած է առաջին Հայկական Սուրբ Խաչ տարրական դպրոցը: Սան Ֆրանսիսքօ գտնուելու տարիներուն մեծ դեր ունեցած է տեղւոյն «Mount Davidson» Խաչը ձեռք բե-րելու գործին մէջ, որու գնումէն յետոյ այն նուիրած է 1915 թուականի Հայոց Մեծ եղեո-նի 1,5 միլիոն զոգերու յիշատակին: Նախագահած է Հիւսիսային Կաթողիկոսի Հայ-ամերիկեան կազմակերպութիւններու խորհուրդը, որ կը ներկայացնէր հայկական ոչ շահութաբեր 24 գործակալութիւններ: Եղած է Արեւմտեան թեմի թեմական խորհուրդի եւ թեմական քանի մը յանձնաժողովներու անդամ եւ նախագահ:

1979-1980 տարիներուն Վազգէն Առաջին Կաթողիկոսի կողմէ իբրեւ Հայրապետա-կան Պատուիրակ ծառայութեան կոչուած է Հնդկաստան, ուր պաշտօնավարած է նաեւ որպէս Կալկաթայի հայկական վարժարանի տեսուչ: Այնուհետեւ, որոշ շրջան եղած է այցելու հովիւ Շուէտի եւ Գերմանիոյ:

1998-1999 տարիներուն եղած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Ժառան-գաւորաց վարժարանի տեսուչ:

2000-2015 տարիներուն եղած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Միջեկեղե-ցական եւ արտաքին յարաբերութեանց գրասենակի վարիչ եւ Դիւանապետ: Նոյն տա-րիներուն Ընծայարանի մէջ աւանդած է «Ներածութիւն Նոր Ուխտի», «Ներածութիւն Հին Ուխտի» եւ «Տոմարագիտութիւն» առարկաները:

2006-ի Դեկտեմբեր 1-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողի-կոսի Հայրապետական կոնդակով արժանացած է Արքութեան պատուի:

2012-ի Հոկտեմբեր 12-ին, ընտրուած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքական Տե-ղապահ:

Տարբեր տարիներուն եղած է Ս. Աթոռոյս Միաբանական Ընդհանուր եւ Տնօրէն Ժողովներու Ատենապետ:

Արիս Արքեպիսկոպոս Շիրվանեանի վախճանը մեծ կորուստ է Հայ Առաքելական Ս. Եկեղեցւոյ եւ մանաւանդ Առաքելական մեր Ս. Աթոռի եւ անոր հաւատաւոր զաւակ-ներու համար:

7 Յունուար, 2024-ին վերջին հրաժեշտի համար հանգուցեալ Սրբազան Հօր աճիւնը դրուեցաւ Ս. Գայիանէ վանքին մէջ, ուր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետութեամբ կատարուեցաւ եկեղեցւոյ կարգը: Արարողութեան աւարտին Վեհափառ Հայրապետն իր ցաւակցական խօսքն ուղղեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ողջ միաբանութեան, հանգուցեալ Սրբազանի հարազատներուն եւ ներկայ հաւատաւոր ժողովուրդին:

8 Յունուար, 2024-ին, Էջմիածնի Ս. Գայիանէ վանքին մէջ հանգստեան Սուրբ Պատարագ մատուցեց հանգուցեալ Սրբազան Հօր ձեռնասուններէն՝ Ս. Շողակաթ վանքի վանահայր Հոգշ. Տ. Արիս Աբեղայ Տօնոյեան: «Ողջոյն»-էն առաջ դագաղը բեմ հանուեցաւ, ուր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Մուշեղ Եպիսկոպոս Պապայեան Սրբազան Հայրը կատարեց հանգուցեալ Տ. Արիս Աբեղայիսկոպոս Շիրվանեանի «Վերջին Օծումը»: Յետ Սուրբ եւ Անմահ Պատարագի, նախագահութեամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Եկեղեցական հայեցակարգային բաժնի տնօրէն՝ Գերաշնորհ Տ. Վազգէն Աբեղայիսկոպոս Միրզախանեանի կազմուեցաւ թաղմանական սգոյ թափօր՝ շարականներով եւ հանգստեան Աւետարաններու ընթերցմամբ առաջնորդելու հանգուցեալը դէպի իր յաւիտենական հանգիստին: Արիս Սրբազանի մարմինը ամփոփուեցաւ Մայր Աթոռի միաբանական գերեզմանատան մէջ:

Իր մահով՝ Պատրիարքութիւնը կը կորսնցնէ իր պարտականութեանց գիտակից, իմաստուն, նուիրեալ ու ծառայասէր եկեղեցականը: Բոլորով սրտիւ կ'աղօթենք հանգուցեալ Սրբազան Հօր հոգիին համար, թող Երկնաւոր Հայրը, իր երկնային լոյսերուն մէջ հանգչեցնէ անոր հոգին եւ իր երկնային մխիթարութիւնը պարգեւէ Միաբանութեանս անդամներուն եւ անոր անմիջական հարազատներուն եւ ընտանեկան պարագաներուն:

«Յիշեսցէ Տէր զհոգի ծառային Իւրոյ եւ յանգուցէ զնա ի լոյս երեսաց Աստուածութեան Իւրոյ. ամէն»:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

